

# Հավասար բաժանարարներ

M բնական թիվը N-ի համար կանվանենք **հավասար բաժանարար**, եթե N-ը M-ի բաժանելիս ստացված քանորդն ու մնացորդն իրար հավասար են` :

Կամայական բնական թիվ ունի վերջավոր քանակի հավասար բաժանարարներ, այդ քանակը կանվանենք տրված թվի **բնութագրիչ**:

Պահանջվում է հաշվել տրված միջակայքի բոլոր թվերի **բնութագրիչների** գումարը:

## Մուտքը

Մուտքի միակ տողում տրված են A, B ( $1 \leq A \leq B \leq 10^9$ ) բնական թվերը:

## Ելքը

Ելքի միակ տողում արտածել խնդրի պատասխանը:

## Օրինակներ

**Մուտքը.**

20 100

**Ելքը.**

202

**Մուտքը.**

1 2

**Ելքը**

0